

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1907/B01 «Քաղաքացիական  
դատավարություն-1»

Որակավորման  
աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

ԵՐԵՎԱՆ - 2021

## **ԹԵՄԱ 1.**

### **Քաղաքացիական դատավարության իրավունքը որպես իրավունքի ճյուղ**

1. Իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանության ձևերը: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:
2. Քաղաքացիական դատավարությունը որպես իրավունքների դատական պաշտպանության ձև: Քաղաքացիական դատավարության խնդիրները:
3. Քաղաքացիական դատավարության փուլերը. հասկացությունը, ընդհանուր բնութագիրը:
4. Քաղաքացիական դատավարության (վարույթների) տեսակները:
5. Քաղաքացիական դատավարության իրավունքի հասկացությունը. առարկան, մեթոդը և համակարգը:
6. Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները. հասկացությունը, կազմը, կարգավորման ոլորտը, իրավաբանական ուժը:
7. Անալոգիայի ինստիտուտը քաղաքացիական դատավարությունում:
8. Սահմանադրական դատարանի որոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումների նշանակությունը քաղաքացիական դատավարությունում:
9. Քաղաքացիական դատավարության նորմերի գործողությունը ժամանակի ընթացքում, տարածության վրա և ըստ անձանց շրջանակի:
10. Քաղաքացիական դատավարության իրավունքի փոխհարաբերությունն իրավունքի այլ ճյուղերի հետ:

### ***Իրավական ակտեր և գրականություն***

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, ՅժՄԸ, 1950:
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք:
- «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք:
- «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենք:

- «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք:
- **Հովհաննիսյան Վ.Վ.,** Զաղաքացիական դատավարության իրավունքը որպես իրավունքի ճյուղ (դասախոսություն), - Եր., 2019:
- **Մեղրյան Ս.Գ.,** «Զաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-678/ՎԴ քաղաքացիական գործով 26.12.2008 թ. որոշումը (Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը՝ դատական պաշտպանության դիմելու իրավունքի վրա նյութական իրավունքի նորմով սահմանված արտադատական կարգով իրավունքի պաշտպանության լրացուցիչ եղանակի ազդեցության վերաբերյալ):

## **ԹԵՄԱ 2.**

### **Զաղաքացիական դատավարության սկզբունքները**

1. Զաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքների հասկացությունը և նշանակությունը:
2. Սկզբունքների համակարգը և դասակարգումը: Սկզբունքների փոխադարձ կապը:
3. Կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները քաղաքացիական դատավարությունում:
4. Տնօրինչականության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:
5. Դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:
6. Դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը քաղաքացիական դատավարությունում:
7. Գործերի քննության բանավորության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:
8. Դատավարական խնայողությունը որպես արդարադատության արդյունավետության սկզբունք-կառուցակարգ:
9. Ամփիջականության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:

### ***Իրավական ակտեր և գրականություն***

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, Հռոմ, 1950:
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»

սահմանադրական օրենք:

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Քաղաքացիական դատավարության սկզբունքները (դասախոսության տեքստ)**, - Եր.,, 2019:
- **Մեղրյան Ս.Գ.**, «Քաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):
- **Անկլերն ընդդեմ Շվեյցարիայի** գործով ՄԻԵԴ-ի 23.10.1996 թ. վճիռը (մրցակցություն և իրավահավասարություն):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0016/02/09 քաղաքացիական գործով 03.12.2010 թ. որոշումը (մրցակցություն և իրավահավասարություն):

### **ԹԵՄԱ 3.**

#### **Քաղաքացիական դատավարական իրավահարաբերություններ**

1. Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների հասկացությունը, դրանց առանձնահատկությունները:
2. Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների ծագման (առաջացման) նախադրյալները:
3. Դատավարական իրավահարաբերությունների օբյեկտը և բովանդակությունը:
4. Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների սուբյեկտները, նրանց դասակարգումը:
5. Դատավարական իրավունակություն և գործունակություն:
6. Դատարանը որպես քաղաքացիական դատավարական հարաբերությունների պարտադիր սուբյեկտ: Դատարանի կազմը:
7. Դատավորի բացարկ և ինքնաբացարկ:
8. Դատավարության մասնակիցների կազմը:
9. Գործին մասնակցող անձանց հասկացությունը, հատկանիշները և կազմը:
10. Գործի քննությանն օժանդակող անձանց հասկացությունը, հատկանիշները և կազմը:

#### ***Իրավական ակտեր և գրականություն***

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:

- **Հովհաննիսյան Վ.Վ.,** Զաղաքացիական դատավարական իրավահարաբերություններ (դասախոսություն), - Եր., 2019:
- **Մեղրյան Ս.Գ.,** «Զաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՅ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/1137/02/08 քաղաքացիական գործով 13.03.2009 թ. որոշումը (Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք նույն դատարանում նույն գործի քննությանը դատավորների մասնակցությունը հիմք է արձանագրելու համար փաստն այն մասին, որ նա ունի անկանխակալ վերաբերմունք որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ):

#### **ԹԵՄԱ 4.**

#### **Գործին մասնակցող անձինք քաղաքացիական դատավարությունում**

1. Գործին մասնակցող անձանց հասկացությունը, կազմը, նրանց հատկանիշները:
2. Կողմերը քաղաքացիական դատավարությունում:
3. Երրորդ անձանց հասկացությունը և տեսակները, գործի քննությանը ներգրավվելու հիմքերը և դատավարական կարգը:
4. Դիմողները և դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձինք:
5. Գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքները և պարտականությունները:
6. Դատակցության հասկացությունը և հիմքերը: Դատակցության տեսակները. պարտադիր և ֆակուլտատիվ դատակցություն: Դատակիցների մասնակցությունը վարույթին:
7. Ոչ պատշաճ կողմի հասկացությունը: Հայցվորի ոչ պատշաճ լինելու հետևանքները: Ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման դատավարական կարգը: Գործի քննությանը նոր պատասխանողի ներգրավումը:
8. Դատավարական իրավահաջորդության հասկացությունը և հիմքերը: Դատավարական իրավահաջորդության ձևակերպումը և իրավահաջորդի իրավական դրությունը:

#### ***Իրավական ակտեր և գրականություն***

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք:

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ս.Գ.**, «Քաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-23/ՎԴ քաղաքացիական գործով 29.02.2008 թ. որոշումը (Արդյո՞ք գործին մասնակցող անչափահասի՝ գործի քննության ժամանակ չափահաս (գործունակ) դառնալը ինքնին կարող է խոչընդոտ հանդիսանալ դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու և վճիռ կայացնելու համար):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-436/ՎԴ քաղաքացիական գործով 30.03.2007 թ. որոշումը (Արդյո՞ք միայն դատարանն է կրում գործի քննությանը պատշաճ պատասխանողին ներգրավելու պարտականությունը: Արդյո՞ք իրավաբանական անձի տնօրենի դեմ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայց ներկայացված դեպքում տնօրենը դիտվում է ոչ պատշաճ պատասխանող, եթե այդ գույքն օգտագործվում է իրավաբանական անձի կողմից):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԼԴ/0126/02/09 քաղաքացիական գործով 27.05.2010 թ. որոշումը (Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ1/0030/02/10 քաղաքացիական գործով 08.05.2014 թ. որոշումը (գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու հայցերով (վիճակագրի հայց) պատշաճ հայցվորի և պատշաճ պատասխանողի հարցը):

## **ԹԵՄԱ 5.**

### **Դատախազի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը**

1. Դատախազության խնդիրները քաղաքացիական դատավարությունում:
2. Քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցության ձևերը:
3. Դատախազի կողմից հայց հարուցելու հիմքերը և կարգը:
4. Դատական ակտերի բողոքարկումը դատախազի կողմից:
5. Դատախազի քաղաքացիադատավարական կարգավիճակը:

## ***Իրավական ակտեր և գրականություն***

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- «Դատախազության մասին» ՀՀ օրենք:
- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ս.Գ.**, «Քաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-20/ՏԴ քաղաքացիական գործով 01.02.2008թ. որոշումը (Արդյո՞ք ՀՀ որևէ մարզի դատախազի մասնակցությամբ գործի քննության ընթացքում վերջինս համարվում է պատշաճ ծանուցված, եթե դատական ծանուցագրերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության հասցեով: Արդյո՞ք ՀՀ որևէ մարզի դատախազի մասնակցությամբ գործի քննության ընթացքում վերջինս համարվում է պատշաճ ծանուցված, եթե դատական ծանուցագրերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության հասցեով):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3058/02/11 քաղաքացիական գործով 05.04.2013 թ. որոշումը (Պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու հայցերի ներկայացումը):

### **ԹԵՄԱ 6.**

**Այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք քաղաքացիական դատավարությունում**

1. Այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձանց մասնակցության ձևերը, հիմքերը և նպատակները:
2. Այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձանց դատավարական կարգավիճակը:

## ***Իրավական ակտեր և գրականություն***

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:

- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., - Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2013:
- **Մեղրյան Ս.Գ.**, «Զաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):

## **ԹԵՄԱ 7.**

### **Ներկայացուցչությունը դատարանում**

1. Դատական ներկայացուցչության հասկացությունը և նշանակությունը:
2. Դատական ներկայացուցչության սուբյեկտների շրջանակը. որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք, որպես ներկայացուցիչ հանդես գալու արգելքը, ներկայացուցչին գործի քննությունից հեռացնելը:
3. Ներկայացուցչության հիմքերը և տեսակները:
4. Դատական ներկայացուցչի լիազորությունները, դրանց դասակարգումը և հաստատումը:
5. Գործը դատարանում վարելու լիազորագիր:

### ***Իրավական ակտեր և գրականություն***

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք:
- **Մարկոսյան Տ.Ա.**, **Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում (դասախոսություն)**, - Եր., ԵՊՀ հրատ., 2019:
- **Մեղրյան Ս.Գ.**, «Զաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-82/ՏԴ քաղաքացիական գործով 27.03.2008 թ. որոշումը (ներկայացուցչի հատուկ լիազորությունները):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0154/04/16 քաղաքացիական գործով 24.01.2019 թ. որոշումը (կազմակերպության կողմից տրված լիազորագրի ձևակերպումը և հաստատումը, լիազորագրում հստակ ժամկետ նշված չլինելու հետևանքները):

## **ԹԵՄԱ 8.**

### **Զաղաքացիական գործերի ենթակայությունը**

1. Ենթակայության հասկացությունը:



2. Դատական ենթակայության հասկացությունը: Զաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակը որոշելու չափանիշները:
3. Դատական ենթակայության տեսակները, բացառիկ, այլընտրանքային, պայմանական, պայմանագրային:
4. Միմյանց հետ փոխկապակցված գործերի ենթակայությունը:
5. Ենթակայության կանոնների խախտման հետևանքները:

### **Իրավական ակտեր և գրականություն**

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք:
- «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք:
- «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենք:
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք:
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:
- **Հովհաննիսյան Վ.Վ., Զաղաքացիական գործերի ենթակայությունը (դասախոսություն), - Եր., 2019:**
- **Մեղրյան Ս.Գ., «Զաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):**
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով 22.04.2016 թ. որոշումը (Արդյո՞ք մի քանի հայցապահանջների հիման վրա հարուցված գործը ենթակա է ընդհանուր իրավասության, թե վարչական դատարանին):

### **ԹԵՄԱ 9.**

#### **Զաղաքացիական գործերի ընդդատությունը**

1. Ընդդատության հասկացությունը և տարբերությունը ենթակայություն-նից: Ընդդատության տեսակները (առարկայական, տարածքային, գործառույթային):
2. Տարածքային ընդդատության տեսակները (ընդհանուր, բացառիկ,

այլընտրանքային, պայմանագրային, միմյանց հետ կապված գործերի) և քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու կանոնները:

3. Ընդդատության կանոնների խախտման հետևանքները: Գործի հանձնումը մեկ դատարանից մեկ այլ դատարան: Ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծումը:

### **Իրավական ակտեր և գրականություն**

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք:
- **Միքայելյան Ա., Զաղաքացիական գործերի ընդդատությունը (դասախոսություն), - Եր.,, 2019:**
- **Մեղրյան Ս.Գ., «Զաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):**
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական 22.04.2016թ. որոշումը Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները հանրային իրավահարաբերությունների հատկանիշների և երկու ու ավելի հայցապահանջ ներառող հայցադիմումների առարկայական ընդդատության վերաբերյալ):

### **ԹԵՄԱ 10.**

#### **Դատավարական ժամկետներ**

1. Դատավարական ժամկետների հասկացությունը և նշանակությունը:
2. Դատավարական ժամկետների տեսակները. օրենքով սահմանված և դատարանի կողմից նշանակվող ժամկետներ:
3. Օրենքով սահմանված ժամկետներ. գործի քննության և լուծման ժամկետներ, առանձին դատավարական գործողությունների կատարման ժամկետներ: Ժամկետի ողջամտությունը որոշելու չափանիշները:
4. Դատավարական ժամկետները հաշվելու կարգը:
5. Դատավարական ժամկետների կասեցումը:
6. Բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնումը. հասկացությունը, հիմքերը և դատավարական կարգը: Վերականգնման ոչ

եթակա ժամկետներ:

7. Դատավարական ժամկետների երկարաձգումը, հասկացությունը և տարբերությունը դատավարական ժամկետների վերականգնումից:

### **Իրավական ակտեր և գրականություն**

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Եսայան Վ.Գ., ժամկետները քաղաքացիական դատավարությունում (դասախոսություն), - Եր., ԵՊՀ հրատ., 2019:**
- **Մեղրյան Ս.Գ., «Քաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):**
- ՀՀ Սահմանադրական դատարանի 22.04.2008 թ. թիվ ՍԴՈ-752 որոշումը (ԸԴՕ 77-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասին):
- ՀՀ Սահմանադրական դատարանի 09.02.2016 թվականի թիվ ՍԴՈ-1254 որոշումը:
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով 03.12.2014թ. որոշումը (Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը՝ դատավարական ժամկետները բաց թողնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2791/02/13 քաղաքացիական գործով 24.03.2017 թ. որոշումը (Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոք բերած անձին ուշ հասու լինելու դեպքում բողոք բերելու բաց թողած ժամկետը ենթակա է վերականգնման իրավունքի ուժով (ex jure), թե՞ վերաքննիչ դատարանի հայեցողությամբ: Արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է վերադարձնել վերաքննիչ բողոքն այն պայմաններում, երբ որոշման եզրափակիչ մասում որևէ անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոք բերած անձի՝ «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու մասին» միջևորդությանը և որևէ եզրահանգում չի արել այն բավարարելու կամ մերժելու վերաբերյալ):

### **ԹԵՄԱ 11.**

### **Դատական ծախսեր**

1. Դատական ծախսերի հասկացությունը և տեսակները քաղաքացիական դատավարությունում: Դատական ծախսերի ինստիտուտի գործառույթները:
2. Պետական տուրք. հասկացությունը, գանձման օբյեկտները, տեսակները, դրույքաչափերը, վճարման կարգը: Պետական տուրքի վերադարձը:
3. Պետական տուրքի գծով արտոնությունները. կազմը, կիրառման հիմքերը և կարգը:
4. Գործի քննության հետ կապված ծախսեր. հասկացությունը, կազմը, կատարման կարգը: Փաստաբանի վարձատրության ծախսերը դատական ծախսերի համակարգում:
5. Դատական ծախսերի հետ կապված պահանջներ ներկայացնելը:
6. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման դատավարական կարգը: Դատական ծախսերի բաշխումը հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում:
7. Կատարված դատական ծախսերի հատուցումը:

### **Իրավական ակտեր և գրականություն**

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք:
- **Մարկոսյան Տ.Ա.,** Դատական ծախսերի ինստիտուտը քաղաքացիական դատավարությունում (դասախոսություն), - Եր., ԵՊՀ իրատ., 2019:
- **Մեղրյան Ս.Գ.,** «Քաղաքացիական դատավարություն-1» սխեմաներում, Եր., ԵՊՀ իրատ., 2017, [http://ysu.am/files/Qax\\_dat\\_1.pdf](http://ysu.am/files/Qax_dat_1.pdf):
- **Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի** գործով ՄԻԵԴ-ի 12.20.2007 թ. վճիռը (պետական տուրքի վճարումը հետաձգելը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով 11.03.2015թ. որոշումը (Արդյո՞ք բողոք բերած անձը կրում է պետական տուրք վճարելու պարտականություն այն պարագայում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2953/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015թ. որոշումը (Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը պետական տուրքի վճարման հետ կապված միջնորդությունների քննության վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0043/02/12 քաղաքացիական

գործով 07.08.2013թ. որոշումը (պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունները քննելու կարգի վերաբերյալ):

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1324/02/12 քաղաքացիական գործով 20.01.2016 թ. որոշումը (Իրավաչափ Է արդյո՞ք պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ դատավարության մասնակցի միջնորդությունը մերժելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը՝ այդ որոշման եզրափակիչ մասում նշված միջնորդության մերժման մասին որևէ եզրահանգման բացակայության պայմաններում: Արդյո՞ք ֆիզիկական անձինք պետք է կրեն իրենց գործունակության վերաբերյալ հարցի քննության արդյունքում կայացված վերջնական դատական ակտերի բողոքարկման համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականություն):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/0492/02/14 քաղաքացիական գործով 27.11.2015 թ. որոշումը (Արդյո՞ք իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելու հանգամանքն ինքնին բացառում է փաստաբանի խելամիտ վարձատրության՝ որպես դատական ծախսի փոխհատուցման հնարավորությունը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0139/02/13 քաղաքացիական գործով 28.11.2014թ. որոշումը (հայցադիմումը դատարան ներկայացնելիս սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը կամ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդությունը հայցադիմումին կցված չլինելու պայմաններում դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու դեպքում կարող է արդյո՞ք հետագայում այդ գումարը բռնագանձել հայցվորից, եթե նշված հարցին չի անդրադարձել հայցադիմումը վարույթ ընդունելիս):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով 29.06.2012 թ. որոշումը (Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս հաշվի առնվող չափանիշների վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-2431/ԿԴ քաղաքացիական գործով 26.11.2007 թ. և թիվ ԵԱԶԴ/1401/02/11 քաղաքացիական գործով 29.06.2012թ. որոշումները (Արդյո՞ք դատական պաշտպանության դիմելու արդյունքում իրավաբանական օգնություն ստանալու համար պատասխանողի կողմից կատարված ծախսերը կարող են դիտվել

որպես հայցվորի կողմից հասցված և հատուցման ենթակա վնաս):

## **ԹԵՄԱ 12.**

### **Հայց**

1. Հայցային վարույթի հասկացությունը և եռությունը:
2. Հայցի հասկացությունը: Հայցի նյութափրավական և դատավարական կողմերը:
3. Հայցի տարրերը. հայցի առարկան և հայցի հիմքը: Հայցի տարրերի դատավարական նշանակությունը:
4. Հայցերի դասակարգումը նյութափրավական և դատավարական հիմքերով: Դասակարգման նշանակությունը: Խմբային հայցեր:
5. Հայցի իրավունք. հայց հարուցելու իրավունք և հայցի բավարարման իրավունք:
6. Հայց հարուցելու իրավունքի ծագման նախադրյալները և դրանց դասակարգումը: Հայց հարուցելու իրավունքի ծագման նախադրյալների և հայց հարուցելու իրավունքի իրականացման պայմանների փոխհարաբերակցությունը:
7. Հայցի դեմ պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոցները. առարկություններ և հակընդդեմ հայց:
8. Հայցային վարույթում տնօրինչական գործողություններ կատարելը. հայցի փոփոխում, հայցապահանջների միացում և անջատում, հայցից հրաժարում, հայցի ընդունում, հաշտության համաձայնություն, արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց սկսելը, վեճի հանձնում արբիտրաժի քննությանը:
9. Հաշտարարությունը քաղաքացիական դատավարությունում:
10. Հայցի ապահովում. հասկացությունը, հիմքերը և դատավարական կարգը: Համաչափության սկզբունքի պայպանումը հայցի ապահովման միջոցներ կիրառելիս: Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը կատարելու կարգը: Հայցի ապահովման միջոցների գործողության տևողությունը:
11. Հայցի նախնական ապահովումը. Հասկացությունը, հիմքերը, դատավարական կարգը, հետևանքները:
12. Հայցի ապահովման և հայցի նախնական ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձանց շահերի պաշտպանության դատավարական միջոցները (հայցի ապահովման միջոցների փոփոխում (ձևափոխում) և վերացում, հակընդդեմ ապահովում, հայցի ապահովման հետ կապված որոշումների բողոքարկում, ապահովման հետ կապված վնասների հատուցում):

## **Իրավական ակտեր և գրականություն**

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Հովհաննիսյան Վ.Վ.,** Հայցը քաղաքացիական դատավարությունում (դասախոսություն), - Եր., 2019:
- **Մեղրյան Ս.Գ.,** Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում (դասախոսություն), - Եր., ԵՊՀ հրատ., 2018:
- **Մեղրյան Ս.Գ.,** Զաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Եր., ԵՊՀ հրատ., 2011:
- ՍԴ-ի 08.12.2009 թ. թիվ ՍԴՊ-845 որոշումը (ՍԴ-ի դիրքորոշումը հայցի տարրերի նշանակության վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/1020/02/14 քաղաքացիական գործով 24.09.2014թ. որոշումը (հայց հարուցելու իրավունքի նախադրյալներ և հայց հարուցելու իրավունքի իրականացման կարգ):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-739/ՎԴ քաղաքացիական գործով 30.03.2007 թ. որոշումը (հայցապահանջի նշանակությունը և հայցապահանջի շրջանակներից դուրս գալը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով 27.05.2011 թ. որոշումը (հայցի փաստական և իրավական հիմք):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով 04.10.2013 թվականի որոշումը (հայցի իրավական հիմքի շրջանակներից դուրս գալու անթույլատրելիությունը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-59/ՏԴ քաղաքացիական գործով 01.02.2008 թ. որոշումը (հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի՝ դատարանի կողմից ապահովման անհրաժեշտության վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/1035/02/09 քաղաքացիական գործով 27.12.2010 թ. որոշումը (հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքի իրականացման պայմանների վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3082/02/13 քաղաքացիական գործով 22.07.2016թ. որոշումը (հայցի տարրերի և հայցի փոփոխման վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0462/02/08 քաղաքացիական գործով 19.10.2012 թ. որոշումը (հայցից հրաժարվելու ինստիտուտի կիրառման վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1315/02/08 քաղաքացիական գործով 10.09.2010 թ. որոշումը (հաստատվող հաշտության համաձայնության դատավարական հետևանքները կողմերին պարզաբանելու դատարանի պարտականության վերաբերյալ):

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թվականի որոշումը (Հայցի ապահովման ինստիտուտի նշանակությունը: Համաչափության սկզբունքի պահպանումը հայցի ապահովման միջոցներ կիրառելիս: Արդյո՞ք հայցի ապահովման միջոցներից արգելանքը պետք է պահպանվի ամբողջ ծավալով, այն պարագայում, երբ օրինական ուժի մեջ մտած վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն և վճռվել է բռնագանձումը տարածել միայն կոնկրետ գույքի վրա):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ1/0694/02/09 քաղաքացիական գործով 02.05.2012թ. որոշումը (հայցի ապահովման միջոցները վերացնելու վերաբերյալ):

### **ԹԵՄԱ 13.**

#### **Ապացուցում և ապացույցներ**

##### **Մաս 1.**

#### **Դատական ապացուցում**

1. Դատական ապացուցման հասկացությունը և նպատակը: Ապացուցողական գործունեության տարրերը:
2. Դատական ապացույցների հասկացությունը: «Ապացույց», «ապացուցման միջոց» և «ապացույցի աղբյուր» եզրույթների տարբերությունը և փոխադարձ կապը:
3. Ապացույցների դասակարգումը. անձնական և իրեղեն, սկզբնական և ածանցական, ուղղակի և անուղղակի, բանավոր, գրավոր և իրեղեն ապացույցներ:
4. Փաստեր վկայակոչելը որպես ապացուցողական գործունեության տարր:
5. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր և ապացուցման ենթակա փաստեր (ապացուցման առարկա): Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմը (կյուբափրավական բնույթի իրավաբանական փաստեր, դատավարական բնույթի իրավաբանական փաստեր, ապացուցողական փաստեր): Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելու աղբյուրները և դատարանի իրավասության սահմանները:
6. Ապացուցման ոչ ենթակա փաստեր. դատարանի կողմից հանրահայտ ճանաչված փաստեր, նախադատելի փաստեր, նոտարական կարգով հաստատված փաստեր և անվիճելի փաստեր:
7. Ապացուցելու պարտականությունը. հասկացությունը, նշանակությունը: Ապացուցման պարտականությունը կողմերի միջև



բաշխելը, ընդհանուր և հատուկ կանոններ:

8. Ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական կարգը:
9. Ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու դատավարական կարգը: Ապացույցներ պահանջելը: Ապացույցների ապահովումը:
10. Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը: Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը որոշելու դատավարական կարգը:
11. Ապացույցների հետազոտման և գնահատման ընդհանուր կանոնները:

## **Մաս 2.**

### **Ապացույցների առանձին տեսակները**

12. Վկաների ցուցմունքների հասկացությունը: Վկայի բացարձակ և հարաբերական իմունիտետ: Անձին որպես վկա դատարան կանչելու դատավարական կարգը: Դատարան ներկայանալու և ցուցմունք տալու պարտականությունը: Վկայի հարցաքննության դատավարական կարգը: Վկայի հարցաքննությունը դատական հանձնարարության կարգով: Առերես հարցաքննություն:
13. Գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Գործին մասնակցող անձանց հարցաքննության առանձնահատկությունները:
14. Գրավոր ապացույցների հասկացությունը, հատկանիշները և դասակարգումը: Գրավոր ապացույցները ներկայացնելու, հետազոտելու, պահելու և վերադարձնելու դատավարական կարգը: Գրավոր ապացույցների վիճարկումը:
15. Իրեղեն ապացույցների հասկացությունը, հատկանիշները, դրանց տարբերությունը գրավոր ապացույցներից: Իրեղեն ապացույցները ներկայացնելու, պահելու, տնօրինելու և վերադարձնելու դատավարական կարգը: Իրեղեն ապացույցների հետազոտման առանձնահատկությունները:
16. Լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները որպես ապացույց: Դրանց թույլատրելիության և հետազոտման առանձնահատկությունները:
17. Փորձաքննության և փորձագետի եզրակացության հասկացությունը: Փորձաքննությունն սշանակելու հիմքերը: Փորձաքննության տեսակները: Կոլեկտիվ և համալիր փորձաքննություն: Դատական փորձաքննությունն սշանակելու կարգը: Փորձագետի դատավարական կարգավիճակը: Փորձագետի եզրակացությունը, դրա տեսակները, բովանդակությունը և կառուցվածքը: Փորձագետի եզրակացության հետազոտ-

ման առանձնահատկությունները: Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություններ:

18. Մասնագետի բացատրությունը քաղաքացիական դատավարությունում: Մասնագետի դատավարական կարգավիճակը:

### ***Իրավական ակտեր և գրականություն***

- Հայաստանի Հանրապետության սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեղյան Ա.Գ., Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2019:**
- Սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՌ-845 որոշումը (ՍԴ-ի դիրքորոշումն ապացուցման առարկան որոշելու դատարանի իրավասության վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 29.02.2008 թ. որոշումը (դատական ակտի նախադատելիությունը բացառող հանգամանքների վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0898/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թ. որոշումը (Արդյո՞ք վերաքննիչ քրեական դատարանի կողմից քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթի կարճման որոշմամբ հաստատված հանգամանքները կարող են դիտվել որպես քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքներ և նախադատելի լինել քաղաքացիական գործ քննելիս):
- Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ5/0716/05/10 վարչական գործով 23.03.2012 թ.-ի որոշումը (փաստը հանրահայտ ճանաչելու պայմանների վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/1096/02/13 քաղաքացիական գործով 22.04.2016թ. որոշումը (ապացուցման բեռը բաշխելու ընդհանուր կանոնների վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0020/02/08 քաղաքացիական գործով 12.04.2009թ. որոշումը (պարտավորությունը կատարված չլինելու կանխավարկածի վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով 08.05.2014թ. և թիվ ՍԴ/0111/02/13 քաղաքացիական գործով 26.12.2014 թ. որոշումները (ապացույցների թույլատրելիության վերաբերյալ):

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/0704/02/11 քաղաքացիական գործով 08.05.2014թ. և թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործով 14.10.2011թ. որոշումները (փաստաթղթի բնօրինակը՝ որպես գրավոր ապացույց, դատարան ներկայացնելու պարտադիր հիմքերի և որպես ապացույց ներկայացված փաստաթղթի պատճենի գնահատման հարցերի վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԳԴ/0504/02/14 քաղաքացիական գործով 22.04.2016 թ. որոշումը (օտար լեզվով կազմված գրավոր փաստաթղթերի թույլատրելիության վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1342/02/11 քաղաքացիական գործով 18.07.2014թ. որոշումը (հետաքննության ընթացքում տրված բացատրության և նախաքննության ընթացքում տրված ցուցմունքի՝ քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցների թույլատրելիության և արժանահավատության հարցերի վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-168 (ՎԴ) քաղաքացիական գործով 23.04.2008 թ. և թիվ 3-657 (ՎԴ) քաղաքացիական գործով 28.11.2008 թ. որոշումները (գործին մասնակցող անձի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննությամբ տրված եզրակացության թույլատրելիության վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով 27.11.2015թ. որոշումը (փորձաքննություն նշանակելու հարցում դատական հայեցողության սահմանների վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱԴԴ/1/0207/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ.-ի որոշումը (փորձագետի հավանական եզրակացության վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականի որոշումը (փորձագետի եզրակացության կառուցվածքի վերաբերյալ):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ2/0049/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ.-ի որոշումը (Արոյո՞ք գործում առկա երկու փորձագիտական եզրակացությունների միջև առկա հակասությունը բավարար հիմք է դատարանի համար կրկնակի փորձաքննություն նշանակելու համար):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1284/02/12 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականի որոշումը (փորձագետի եզրակացության վերաբերելիությունը, թույլատրելիությունը և արժանահավատությունը գնահատելիս հաշվի առնվող չափորոշիչների, ինչպես նաև լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նպատակների և նշանակման հիմքերի վերաբերյալ):

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 քաղաքացիական գործով 13.02.2009 թ. որոշումը (կողմի ներկայացուցչի ցուցմունքի թույլատրելիության վերաբերյալ):